

355 (47)

P-27



29 MAR 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՌԱՅԱՆԻՑ. ՓՆԵՆԵՐԱՅԻ ԻՈՐԿՐԻԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ջրողեառոնցի բոլոր երկրներ, միացեք.

Ա. ԿՈՒՆՏԱՅ

ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1007
30275

730 p

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ԾՈՌԿԻՆ—1920

1. ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ԿԱՆԿՆՑ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ.

Կենտրոն արդեօք կոմունիստական պետութեան մէջ ընտանիքը: Կլինի նա ճիշդ այնպէս, ինչպէս ներկայումս է: Այդ հարցերը տանջում են բանւոր-դասակարգի շատ կանանց և մտաւանդում աղամարդ ընկերներից շատերին: Բանւորուհիները այդ հարցի մասին յապկապէս այն ժամանակից սկսեցին խորհել, երբ կեանքը սկսեց փոխել մեր աչքի շաւղ: Անհետանում են նախկին սովորութիւնները, պրոլետարիատի ընտանիկան կեանքի ողջ հաւթիւնը դասաւորւում է այլ կերպ, նոր, անսովոր, «գարմանայի կերպով», ինչպէս մտածում են շատերը: Ճարտաւեսանքների տեղի է տալիս նաև այն, որ Խորհրդային Ռուսաստանը թեթեւացնում է ապահարդանքը: Ժողովրդական կոմիտաների գեղրիտի համաձայն, որ լոյս տեսաւ 1917 թ. դեկ. 18-ին, յապահարդանք այլևս հարաւտներին միայն մատչելի չուղեւթիւն չէ. այժմ կին բանւորուհիները այլևս ստիպւած չեն լինի ամուսնուց բաժանելու համար ամիսներով, նայն իսկ տարիներով ջանքեր լծափել փոխադիր ստանալու համար այն

ամուսնուց, որը իր հարբեցողութեամբ, ծեծով, կռուութեամբ հանդիստ չէր տալիս նրան: Այժմ փոխադարձ համաժայնութեամբ կարելի է ապահարդան ստանալ, մի-երկու շաբաթից ոչ ուշ: Սակայն ապահարդանի այդ զիւրութիւնը, որ օրինում են բնտանիքում առաւապող կանայք, վախեցնում են մնացեալներին, նրանց՝ որոնք սովորել են տղամարդուն համարել կերակրող և կեանքի միակ լինարանը: Սակայն նրանք չեն տեսնում, որ կինը իր յենարանը պէտք է որոնէ ու գտնէ ոչ թէ տղամարդու մօտ, այլ կռիւկախիլի և պետութեան մէջ:

Կարիք չկայ թաղցնել ճշմարտութիւնը: Նախկին սովորական բնտանիքը, որի կերակրողն ու գլուխը եղել է տղամարդը, իսկ կինը նրա մօտ ոչ կամք է ունեցել ոչ փող, ոչ էլ ժամանակ.—այդ բնտանիքը փոփոխւում է մեր աչքի տառաշ Դրանից պէտք չէ վախենալ: Միայն անդիտութեան ու անուսութեան պատճառով են մտածում, թէ ինչ որ սովորական և առօրեայ է, ոչ մի դեպքում չի փոխւի: Այդպէս էր առաջ և այդպէս էլ կլինի: Այդ ասածը ճիշդ չէ: Եթէ կարգանք այն մասին, թէ մարդիկ տառաշ ինչպէս էին ապրում, պարզ կլինի որ ամեն ինչ փոխւում է. չկան այնպիսի բարքեր, չկայ այնպիսի պետական կռուութեամբ, չկան այնպիսի սովորութիւններ, որոնք մնացին անփոփոխ:

Ընտանիքը ես, մարդկային կեանքի զանազան ժամանակներում շատ անգամ է փոխել իր ձևերը: Նա բոլորովին այնպէս չէր, ինչպէս որ մենք սովորել ենք տեսնել նրան: Կար ժամանակ, երբ այնպէս էր համարւում, թէ միակ կանոնաւոր բնտանիքը,—դա տոհմական բնտանիքն է, այսինքն այնպիսին, որի գլխին կանգնած է պառամալը, իսկ նրա շուրջը ապրում և միասին աշխատում են նրա երեխայքը, թոռները, ծոռները: Եղել է անցեալում նաև նահապետական բնտանիք, երբ բնտանիքի գլուխը հայրը—տէր էր համարւում և նրա հայրական հովանու տակ, ապրում էին երեխաներն ու թոռները, ենթարկւելով նրա կամքին ու օրէնքներին: Գիւղերում ու գիւղացիութեան մէջ դեռ մինչև այսօր կարելի է այսպիսի բնտանիքների պատահել: Այդտեղ բնտանիքի բարքերը և օրէնքները ուրիշ են, քան քաղաքի բնտանիքների բնտանիքներում: Այնտեղ կան շատ սովորութիւններ, որոնք քաղաքի պրոլետարական բնտանիքում առկա չեն: Ընտանիքի ձևերը, սովորութիւնները, զանազան ժողովուրդների մօտ տարբեր են: Կան ժողովուրդներ, որոնց մէջ (թուրքեր, արաբներ, պարսիկներ) օրէնքի համաձայն ընդունւած է, որ մի տղամարդը մի քանի կին կարող է ունենալ: Առաջներում կային և մինչև այժմ էլ կան ցեղեր, որոնց մէջ ընդհանառակը, թույլատրւում է կնոջը

մի քանի ամուսին անհնար Մենք սովորել ենք
անհնար, որ ազամարդիկ մինչև աղջիկ օրինական
ամուսնութիւնը, նրանից պահանջում են կռու-
թիւն, սակայն առաջ կային ժողովուրդներ, որոնց
մէջ կիներ պաշտեալում էր իր ունեցած սիրականնե-
րի քանակութեամբ և ձեռքերին առաքելքներ կրում
էր այնչափ մատանիք յորքան որ ամուսիններ էր
ունեցել: Այդ սովորութիւնը շատերը, որոնք
մէջ կը դարձայնեն, և որոնց մենք անբարոյական
կանխանքը, որից ցեղերի և ժողովուրդների մէջ
օրէնք են համարում. իսկ այն, ինչ որ մեղանում
համարում է սովորութիւն կամ օրէնք, — նրանց
թուում է անգրք: Այդ պատճառով էլ հիմք չկայ
վախենալ նրանից, որ ներկայ պահուն, բնականիքի
մէջ փոփոխութիւն է կատարում, որ նրա մէջ
մեռնում է հինը, անպէտք և կնոջ առաջնորդու-
թաւրութիւնը դառաւրում նորի համաձայն:
Անհրաժեշտ է միայն լաւ հասկանալ, որ ինչն է
հնացել և արդեօք ո՞րպիսի իրաւունքներ և սովո-
րութիւններ, և ինչպիսի յարաբերութիւններ պի-
տի սեղծւեն քան որի և քան որոշուեմ միջև, որ-
պէսզի համապատասխանեն մեր նոր աշխատա-
րական Խորհրդային Ռուսաստանի համայնական-
դիւն և մնայ այն, ինչ որ աւելի տեսական է: Իսկ
այն, ինչ որ մնացել է հնից, անցեալից, կարծա-
տէրերի և սեփականաւէր — կապիտալիստների իշ-

խանութեան ժամանակներից, ինչ կորչեն առ չքա-
նան, պրոլետարիատի և չքաւորների թշնամիների —
սեփականաւէրների հետ:

Այն բնականիքը, որին սովոր է քաղաքի և գիւղի
պրոլետարիատը, ղեռ ևս անցեալի մի մասն է:
Կար ժամանակ, երբ հենց այդպիսի փակ և անխախտ
բնականիքը (ընդունւած էր կարծել, որ քանակային
օրինած ամուսնութիւնը ասորիներով չի լուծւի),
անհաժեշտ էր նրա անդամների համար: Առանց
բնականիքի ո՞վ պիտի կերակրէր, հագցնէր երեխայից,
ո՞վ պիտի կրթէր նրանց խելքը — միտքը: Որք լի-
նելը անցեալի ամենազառն դժբախտութիւնն էր:
Մեր անսած սովորական բնականիքում ամուսինն էր
պատասխում, կերակրում կնոջն առ երեխաներին.
Իսկ կիներ պարապում էր տնտեսութեամբ, այսինքն
անային գործերով և հնարաւորութեան չափ՝ դաս-
տիարակում իրեխաներին: Սակայն վերջին հարիւրա-
մեակում բարձր այն երկրներում, ուր կապիտալն էր
իշխում, ուր արագութեամբ դարգանում են զա-
ւօքներ, գործարաններ առ վարձու աշխատանքով
ապրող կապիտալիստական այլ ձեռնարկութիւններ,
այնանկ քաջալուծ է սովորական բնականիքը: Նրա
բարբերքը, սովորութիւնները փախւում են շոշոպա-
տի կեանքի պայմանների հետ: Բնականական բարբե-
րի մեծ փոփոխումը ամենից առաջ եղաւ կնոջ
վարձու աշխատանքով պարապելու հետեանքը:

Անցեալում ընտանիքի կերակրողը համարուած էր միայն տղամարդը: Սակայն Ռուսաստանում վերջին իրօուն և վաթսուն տարիների ընթացքում (ուրիշ երկրներում աւելի վաղ) կապիտալիզմը կնոջն էլ ստիպեց վաստակ փնտռել ընտանիքի պատերից դուրս: Ամուսնու—կերակրողի վաստակը ընտանիքին բաւական չէր, ուստի կարիքը ստիպեց կնոջը ևս վաստակի դնալ. նրան ևս կարիքը ստիպեց ձեռքի գործարանների գրասենեակների դռները: Ամեն տարի աւելանում է կին բանուորների թիւը, օրոնք աշխատում են տանից դուրս, օրավարձով, խանութներում կամ գործարանների գրասենեակներում, տնային ծառայութեան մէջ, լացարաններում, թէչքահաններում ևայլն: Մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը վիճակագրութեան համաձայն եւրոպայի և Ամերիկայի պետութիւններում հաշուում էին 60 միլիոն կանայք, որոնք ապրում էին իրանց վաստակով: Պատերազմի ընթացքում այդ քանակութիւնը խիստ մեծացաւ: Այդ կանանց համարեա թէ կէսը ամուսնացած են: Բայց դա ի՞նչ ընտանեկան կեանք է, երբ կին մայրը աշխատանքի վրայ է թէկուզ ութ ժամ, իսկ ճանապարհով միասին աաս ժամ: Ընտանիքի տնտեսութիւնը աչքաթող է արւում, երեխայը մեծանում են առանց մայրական խնամքի, աւելի շուտ՝ փողոցներում, թօղնած ինքն իրենց, ենթակայ ամեն տեսակ պա-

տահակականութիւնների: Կին - մայր-բանուորուհին ուժաթափ է լինում միանգամից երեք աշխատանք կատարելուց. գործարանում, դաւօդում, տպարանում կամ գրասենեակում տղամարդուն հաւասար աշխատանք կատարելուց լետոյ նա դեռ պէտք է շտապի, որ ընտանիքի տնտեսութիւնը կանոնաւորի և երեխաների մասին հոգայ. կապիտալիզմը կնոջ ուսերին դրեց նրա ոյժերից բարձր լուծ: Նա նրան դարձրեց վարձու բանուորուհի, սակայն չթելթեացրեց ոչ նրա տնտեսութիւնը, ոչ էլ նրա մայրական պարտականութիւնները, Իր ոյժերից բարձր եռակի ծանրութեան տակ կորացած կնոջ կրծքից դուրս է դալիս խեղդւած հառաչանքն. չի չորանում նրա ուշքի արտասուքը: «Կնոջ բաժինը» միշտ էլ քաղց չի եղել, սակայն կինը դեռ երբէք չի ապրել այդպէս դժման ու ծանր պայմանների մէջ, ինչպէս որ միլիոնաւոր բանուորուհիներն են ապրում կապիտալի լծի տակ և դա հէնց գործարանային արտադրութեան ծաղկած ժամանակ:

Ինչքան աւելի արագ է զարգանում կանանց վարձու աշխատանքը, այնքան արագ է կատարւում նախկին ընտանիքի քալքայումը: Ի՞նչ ընտանեկան կեանք է այն, երբ ամուսինը և կինը հերթով, զիշեր ցերեկ աշխատում են: Ի՞նչ ընտանեկան կեանք է այն, երբ կինը հնարաւորութիւն չունի հարկ եղած չափով կերակուր պատրաստել: Ի՞նչ ծնողը

են նրանք, երբ ամբողջ օրուայ ծանր աշխատանքից չկտույ մի ժամ անդամ չեն կարող երեխաների մոտ լինել: Առաջ մայր — տիրուհին տան մէջ պարապում էր անտեսութեամբ, իսկ երեխայքը շարունակ նրա մոտ էին նրա ազալութիւնը հսկողութեան տակ... Այն մայր-տիրուհին դորժաբանային սուլոցը լսելուն պէս վազում է արհեստանոց և նոյն սուլոցով էլ շառագում պում տուն, որովհետև կանոնաւոր շառագումութիւնը, որից չկտույ դեռ քունը չառած կրկին դորժի է շառ պում: Ոչ թէ կեանք, այլ տաժանակիր աշխատանք է այդ կեանքը բոլոր բանւորուհիների համար: Իրերի այդ պիտի դրութեան դէպքում քաջբալում և կորժանում է ընտանիքը: Այն բոլորը, որոնց վրայ հիմնւում էր ընտանիքը, հեռագհեռէ անհետանում են: Ինչպէս ընտանիքի անդամներ, այնպէս էլ պետութեան համար ընտանիքը այլ և ուրիշ հրաժեշտութիւն չէ: Ընտանիքի նախկին ձեռք դառնում է միայն բեռ:

Ինչի՞ վրայ էր լինում նախկին հին և փակ ընտանիքը: Ամենից առաջ այն բանի վրայ, որ ընտանիք կերակրողը ամուսինն ու հայրն էր: Երկրորդ, այն անտեսութեան վրայ, որ անհրաժեշտ էր ամբողջ ընտանիքի անդամների համար: Երրորդ, նա անհրաժեշտ էր ծնողներին, իրանց երեխայոց դաստիարակութեան համար: Ինչ է մնում է ներկայումս նախկին ընտանիքից: Մենք արդէն ասացինք, որ

աղամարդը այլևս ընտանիքի կերակրողը չէ: Կինւորուհին նրան հաւասար վաստակում է: Նա սովորեց կերակրել իրան, երեխայոց, և շատ անգամ էլ նոյն իսկ աղամարդ ամուսնուն: Մնում է անտեսութիւնը և երեխաների ապրուստն ու դաստիարակութիւնը: Նայենք այժմ աւելի մօտիկից, թէ չեն դադարում արդեօք այդ դորժաւորութիւնները ընտանիքի նպասակ լինելուց:

2. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԱՆՎՐԱԺԵՏՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՆՈՒՄ Է.

Կար ժամանակ, երբ գիւղի և քաղաքի չքաւոր կանանց ամբողջ կեանքը անցնում էր ընտանիքում: Ընտանիքի տան դռնից այն կողմ կանայք ոչինչ չգիտէին և նրանցից շատ քչերն էին ցանկանում իմանալ թէ ի՞նչ է կատարւում դրսում: Դրա փոխարէն չէ՞ որ ընտանիքում շատ աշխատանք կար: Այդ աշխատանքը բազմազան էր՝ կարէնք և անհրաժեշտ ոչ միայն ընտանիքին, այլ նաև պետութեան համար: Կինը կատարում էր ոչ միայն այն աշխատանքը, որը կատարւում են բանւոր և չքաւոր գիւղացի կանայք, այսինքն ոչ միայն ընտանիքի համար — եփում, լվանում, տունը մաքրում կաքում կարկառում պախալիզէնը, այլ կանոնաւորում էր նաև մի շարք արիւղ գործեր: Նրանք բուրդ և

կանեփ էին մանուկ, կտաւ, մահուդ, գուլպա և հաշիւս գործում, ձմեռւոյ համար ամեն տեսակ թթուներ և քաղցրաւենիք պատրաստում, միս աղուծ ու չորացնում, միջոցների թոյլ տւած չափով կ'աւս պատրաստում, մօմ հալում և ձուլում:— Էն կարող թւել այն, բոլորը ինչ կատարում էր կինը: Այդպէս էին ապրում մեր մայրերը և պապերը: Դեռ այժմ էլ կան երկաթուղուց, կամ մեր բազմաթիւ գետերից հեռու ընկած խուլ դիւղեր, ուր կեանքը մինչև հիմի ընթանում է հնի նման, ուր տիրուհի-կիներ զբաղւած է ամեն տեսակ աշխատանքներով, որոնք արդէն վաղուց իվեր չեն կատարւում մեծ քաղաքների բանւորական ընտանիքներում և գործարանային բազմամարդ կենտրոններում:

Մեր տատերի ժամանակ կնոջ ամբողջ այդ տնային աշխատանքը պիտանի և օգտակար էր: Նրանով էր պահպանւում ընտանիքի բարօրութիւնը: Որչափ ժրաշտն էր աշխատում տան տիրուհին, այնչափ լաւելի լու էր ապրում գիւղացու և արհեստավորի ընտանիքը, այնքան աւելի առաւելութիւն և կարգ կար ընտանիքում: Տան-տիրուհու այդ աշխատանքից շահւում էր նաեւ ամբողջ պեռական տնտեսութիւնը: Գնոջ ձեռքով պատրաստւում էր օջ միայն սուպ և կարափիլ, որոնք իսկայն և եթ ուտւում էին, այսինքն սպառւում

ընտանիքի անմիջական գործածութեան համար, այլ նաեւ պատրաստւում էին առարկաներ (կտաւ, մանած, իւղ և այլն) և նիւթեր, որոնք շուկայում վաճառքի էին հանւում, այսինքն դառնում էին տարանքներ, արժէքներ:

Ճշմարիտ է, մեր տատերի ժամանակ նրանց աշխատանքը փողով չէր գնահատւում: Սակայն ամեն մի ասնուէր, գիւղացի թէ արհեստավոր, կին ընտրելիս աշխատում էր այնպիսին ընտրել, որը տնտեսութեան մէջ, ընտանիքի աշխատանքում, ունենար «ոսկէ ձեռքեր»: Ամուսինը մտածում էր, որ առանց կնոջ ընտանեկան աշխատանքի անկարելի է ապրել: Պետական և ժողովրդական շահերի տեսակէտից այնպէս էր դուրս գալիս, որ ընտանիքի մէջ կիներ և նրա բոլոր անդամները որչափ շանասիրաբար և շատ աշխատէին և ընտանիքի համար անհրաժեշտ առարկաների (կտաւ, կաշի, բուրդ) աւելորդ շուկայ դուրս բերելով ծախէին, այնչափ շատ էր շատւում թէ ժողովրդական տնտեսութիւնը, թէ ամբողջ պետութիւնը:

Սակայն կապիտալիզմը փոխեց նախկին կեանքը: Կապիտալիզմի ժամանակ այն բոլորը, ինչ որ առաջ կատարւում էր ընտանիքում, գլխավորապէս տանտիրուհու ձեռքով, սկսեցին պատրաստել և գործարանները և արհեստանոցները մեծ քանակութեամբ: Այժմ ո՞ր տան տիրուհին ճարպից մօմ կ'առնէ,

բուրդ կզգէ, կտաւ կգործէ երբ այդ բոլոր ապ-
րանքները ամեն տեղ ծախուում են: Կար ժամանակ,
երբ ամեն մի երաւասարդ ազգիւն սովորեցնում էին
գուլպայ գործել: Սակայն ներկայ ժամանակ բանու-
որուհիներից միւս է մտածում գուլպա գործելու մա-
սին. դրա համար մըտեղ նա ժամանակ կըսնի: Ժա-
մանակը փող արժէ, և առանց օղտի կամ շահի
նա չի ծախսում: Այժմ տան-տիրուհի բանւորուհուն
աւելի ձեռնտու է պատրաստի գուլպա գնել,
քան թէ գործելու համար կորցնել անադին ժամա-
նակ: Նազադիւտ է մի ափսոսի բանւորուհի, որը
վեր կենալ ու ձմեռւալ համար վարունդ թթու
գնի, կամ պատրաստի այլ իրեր, երբ մանրա-
փոխուի մօտ այդ բոլորը կարելի է փողով գնել:
Թող գնածը վատ լինի, թող գործարանային
իրը արժանութեան պատճառով աւելի լատ չլինի,
քան ամառիկնոջ ձեռքով պատրաստածը—բանու-
որուհին ժամանակ և ոյժ չունի անտեսութեան հա-
մար ժամանակ վատնելու: Նա տանից դուրս ամե-
նից առաջ վարձու աշխատատեղ է: Այսպէս, փոքր
առ. փոքր, տանից և անտեսութիւնից հեռանում
նախկին սովորական աշխատանքները, առանց որեց
մէր տատերը բնականիւ պատկերացնել չէին կարող:
Այն ինչ որ առաջ բնականիւրում էր պատրաստուում,
այժմ պատրաստուում է լատուկ արհեստանոցներում

և գործարաններում, բանւորների և բանւորուհի-
ների ընդհանուր աշխատանքով:

Ընտանիքին մնում է ոչ թէ տրտաղրել, այլ
սպասել: Տեսչին աշխատանքը այժմ բազմապէս է
չորս աշխատանքից—տուն հաւաքել, (յատակը լայ-
փողին մաքրել, վառարանները վառել, լամպերը կա-
նոնաւորել և այլն), երկրորդ—թխածք, հաշ և
ընթերց պատրաստել: Երրորդ—սպիտակեղէն լայ,
չորրորդ—ընտանիքի անդամների շորերը կարել-
կարկատել:

Նկատ չէ այն աշխատանքը, որն ուժասպառ է
տնում կնոջը ու խլում նրա ժամանակը, և դա
յատկապէս այն ժամանակ, եթէ լիշենք, որ նա
միաժամանակ աշխատում է նաև ձեռնարկութեան
մէջ: Սակայն այնուամենայնիւ, դա այն աշխատան-
քը չէ, որ կատարում էին մեր տատերը: Ինչով է
դանաշանում այդ աշխատանքը: Ամենից առաջ
նրանով, որ տեսչին տնտեսութեան այդ բոլոր
չորս կողմերը, որոնցով դեռ պահւում է բնականի-
քը, պիտութեան և ժողովրդական տնտեսութեան
համար օգտակար ու պիտանի չեն: Ժողովրդական
հարստութեան տեսակէտից այդ աշխատանքը չի
ստեղծում ոչ մի նոր արժէք:

Կին-տանտիրուհին կարող է առաւօտից
մինչև ուշ գիշեր դադարել իր աղքատիկ բնակարա-
նը մաքրելով, կարող է ամեն օր լայ ու հարթու-

կել իբ սպատակեղէնը, կարող է ամենահոգատար կերպով կարել ու կարկատել իր հաղուսար, համեստ պարէններով հարկ եղած կերակուրը պատրաստել: Սակայն երեկոյեան նրա աշխատանքից նիւթական ոչ մի հեաք չի մնում. նրա աշխատատեղը ձեռքերով չստեղծւեցին այնպիսի առարկաներ, որոնք գնահատելին առեւտրական շուկայում: Իսկ տան ամբողջին թէկուզ հազար տարի էլ որ պարի, նա ամեն օր կարիք կղզայ իր տնտեսական աշխատանքը սկսել սկզբից: Դարձեալ դարակներ լրացնելու փոշի կնտաի, դարձեալ ամուսինը աշխատանքից քաղցած թուն կվերադառնայ, դարձեալ երեխայը կկեղտոտեն շորերը... Տան ամբողջութեամբ աշխատանքը օրեցօր դառնում է անպէտք և անարտադրողական:

Տնային տնտեսութիւնը մեռնում է: Նա իր տեղը զիջում է հասարակական տնտեսութեանը: Կին բանւորուհիները սենեակը մաքրելու փոխարէն, կոմմունիստական հասարակութեան մէջ կլինին այնպիսի մասնագէտ բանւորուհիներ, որոնք առաւօտները կմաքքեն բոլոր սենեակները: Այս բոլոր տաղանդալի հոգնեցուցիչ աշխատանքը հարուստները վաղուց են վերցրել իրանց կանանց ուսերից: Իսկ ինչո՞ւ համար պէտք է տանջւի բանւորուհին: Խորհրդային Ռուսաստանում բոլոր բանւորուհիներին կեանքը պէտք է դրւած լինի այն չարմաութիւններով, այն լոյսով, առողջապահութեամբ,

գեղեցիկութեամբ, որպիսիք առաջ միայն հարուստներին էին մատչելի: Խորհրդարութեամբ տանջւելու և վերջին ազատ ժամերը խոհանոցում վատնելով՝ հաշ և բնթրիք պատրաստելու տեղ, կոմմունիստական հասարակութեան մէջ լայն կերպով պիտի դարձանան հասարակական ճաշարաններն ու կենտրոնական խոհանոցները: Կեանքը այդ օւղղութեամբ ընթանում է նոյն իսկ կապիտալիզմի ժամանակ: Վերջին լիսնամակում բոլոր մեծ քաղաքներում սեղանաւորներ և սրճարանները զարգացան աշխուսիքին անձրեկից յետոյ բնոյ սունկերի՝ անսովոր արագութեամբ: Սակայն զանազանութիւնը նրանումն է, որ կապիտալիստական կարգերում սեղանաւորներից մարդիկ օգտւում էին փողով, իսկ կոմմունիստական հասարակութեան մէջ կենտրոնական խոհանոցները և ճաշարանները ընդհանուր սեփականութիւն կդառնան: Ծիշտ այդպէս էլ անցնում է այն անհրաժեշտութիւնը, երբ բանւորուհին հայումաշ էր լինում տաշտակի առաջ, կամ սպիտակեղէն կարկատելուց աչքերը կուրացնում: Կենտրոնական լւացարանները, ուր շաբաթը մի անգամ բանւորուհիները տանում են իրանց քնտանիքի սպիտակեղէնը և նրա տեղ ստանում լւացւածն ու մաքրւածը, կնոջ ուսերից վերցնում են նաեւ այդ աշխատանքը: Իսկ շորեր կարկատելու

1007
3025

յառաջ արհեստանոցները բաժնորուհիներին թող են տալիս, ժամերով կարգաւորու փոխարէն, ժողովներ, կոնցերտներ, միտինգներ գնալ։ Բայց չորս կարգի աշխատանքը, որոնցով դեռ առայժմ պահուում է անալիս անտեսութիւնը, կոմմունիստական կարգերը, լաղթանակով մահւան են դատապարտուում։ Նրանց դիակի վրայ բանւորուհիները կաշիք չունեն լաց լինելու։ Կոմմունիզմը թօթալուծ է կոչու ասերից տնային ստրկութիւնը, որպէսզի նրա կեանքը դարձնի աւելի հարուստ, լիակատար, բարխ և աղատ։

3. ԵՐԵՒԱՆԵՐԻ ԴԱՍՏԻՈՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԴՈՐՆԵՆ Է.

Բայց ի՞նչ է մնում բնտանիքից, եթէ չկայ տնային անտեսութիւնը։ Մնում է բնտանիքի հիմքերից մէկը— երեխաները։ Սակայն այդ հարցում էս աշխատանքային, բնկերական պետութիւնը լաղթում է բնտանիքին— այն բոլոր հոգսերը, որոնք առաջ կատարում էին ծնողները, հասարակութիւնը վերցնում է իր վրայ։ Դեռ կապիտալիզմի ժամանակ երեխայի ուսուցումը դադարեց բնտանիքի հոգատարութեան առարկան լինելուց։ Երեխաները ուսուցում են դպրոցում։ Երբ երեխան դպրոցական հասակին է հասնում, արդէն

ծնողները ըմբռնում են, որ երեխայի մասագրգորգացման հոգը իրանց վրայից վերցւած է։ Սակայն բնտանիքում դեռ մնացել են ուրիշ կարեւոր հոգսեր ևս, ինչպէս օր. երեխաներին կերակրելը, հագցնելը, նրանցից պատրաստել պատաւոր և գործունեայ աշխատատեղեր, որո՞ք կարող լինեն թէ իրանց կերակրել և թէ ծնողներին ծերութեան ժամանակ անօգնական չթողնել։ Սակայն հազիւ թէ բանւորական բնտանիքում յաջողում էր իրագործել ծնողական պարտականութիւնները։ Քիչ աշխատավարձը չի թող տալիս նոյն իսկ կուշա փորով կերակրել երեխայի։ Իսկ աղատ ժամանակ չունենալու պատճառով ոչ հօշոր, ոչ մօրը չի յաջողում աշխատութիւն դարձնել երեխայի սերնդի դաստիարակման անհրաժեշտ գործին։ Այնպէս էին կարծում, թէ բնտանիքն է դաստիարակում երեխայից։ Բայց մի թէ դա այդպէս է։ Պրոլետարական երեխաներին փողոցն է կրթում։ Պրոլետարական երեխայըր վաղուց ի վեր չգիտեն, թէ ինչ բան է բնտանիքան կեանքը, որին լաւ ծանօթ էին դեռ մեր մայրերն ու հայրերը։ Սչգ պայմաններում ծնողներին ցած աշխատավարձը, անապահովութիւնը և քաղցը բնտանիքին հասցնում է աշտեղ, որ պրոլետարիատի երեխաները յաճախ դեռ առաջադեպ հասակից ինքնուրոյն աշխատատեղ են դառնում լիւի եթէ աղաները կամ աղքէիւք իրենք են վառ-

տակում, այդ դէպքում ծնողական խօսքերը և խորատաններ այլևս օրէնք չեն: Նախկին հնազանդութիւնը անհետանում է և թուլանում է ծնողական իշխանութիւնը: Ծիշտ ախպէս, ինչպէս որ մեռնում է տնային տնտեսութիւնը, ընտանիքի մէջ երեխաների վերաբերմամբ աւելի քիչ պարտականութիւններ են մնում, այսինքն երեխաներին կերակրելը և դաստիարակելը աստիճանաբար ծնողների ուսերից վերցւում ու դրւում են հասարակութեան ուսերին: Երեխաները, խիստ յաճախ, պրոլետարական ընտանիքի համար կապիտալիստական կարգերում ներկայացնում են նրա ոչմերից բարձր բնու:

Կոմունիստական հասարակութիւնը անկասկած, շաապում է ընդառաջել ծնողներին և թեթեւացնել նրանց այդ ծանր լուծը: Մեզանում, Խորհրդային Ռուսաստանում, Ժողովրդական Լուսաւորութեան և Սոցիալական Ապահովագրութեան Ժողովրդական կոմիտարիատների միջոցով արդէն շատ բան է արւում, որպէսզի թեթեւացւի ընտանիքի կողմից երեխաներին կերակրելու և դաստիարակելու գլխար գործը: Մանկական տներ, մանկական ապաստարաններ, մանկապարտէզներ, մանկական գաղութներ և «օճախներ», հիւանդանոցներ և բուժարաններ հիւանդ երեխաների համար, ապա նաև մանկական սեզանատներ, դպրոցական նախաձաշիկ, դպրոցական մանուկներին գնասական

սխառութիւններ ու տաք շորեր մատակարարելը, — մի՞թէ այս բոլորը ցոյց չեն տալիս, որ երեխաների հոգատարութիւնը ընտանիքի շրջանակից դուրս դալով, դառնում է կոլլեկտիւ հասարակութեան գործը:

Առաջ ընտանիքում ծնողների հոգատարութիւնը գէպ իրանց երեխայքը և տնտեսութիւնը երեք մասի էր բաժանւում. առաջին — մանուկների հոգատարութիւնը, երկրորդ — նրանց դաստիարակութիւնը, երրորդ — նրանց կրթութիւնը: Երեխաների ուսուցումը նախ դպրոցներում, աւելի ուշ գիմնազիայում և համալսարաններում դեռ կապիտալիզմի ժամանակ դարձել էր պետութեան գործ: Բանւոր դասակարգի պահանջները և կեանքի պայմանները հրամայողաբար թեկադրւում էին, նոյնիսկ կապիտալիստական դասակարգային հասարակութեանը՝ ստեղծել մի շարք հիմնարկութիւններ երեխաների համար, — մանկական հրապարակներ, մանկապարտէզներ, մանկական տներ և այլն: Տեւալ պետութեան մէջ բանւոր դասակարգը որչափ որ գիտակից ու կազմակերպւած լինի, ախպէս աւելի շատ կ'վերցնի հասարակութիւնը ծնողների ուսերից երեխայց հոգատարութիւնը: Սակայն բուրժուազիան ընտանիքի կործանման հնարաւորութիւնից վախենալով ընդառաջ չէր գնում բանւոր դասակարգի պահանջներին: Կապիտալիստները լու հաշւի էին առնում այն հանդամանքը, որ բանւորնե-

րի և բանւորութիւնի չեղափոխական ոգին թաւաշնել և աղաւթութեան կամբը կտանցնելու կարող է նախկին ընտանիքը, ուր կինը գտնուում է ստրկացման վիճակի մէջ, իսկ ընտանիքի բարեկեցութեան համար պատասխանատու է արժանաւորելու Լեւոնիքի հոգսը բոլորովին ճգնում է բանւորին և ստիպում նրան զիջումներ անել կ'ապրտալիսախնութեւն, երեխաները քաղցած են, ինչ ասեալ, որ չեն անում նրանց հայրն ու մայրը: Եթէ կապիտալիստական հասարակութեան մէջ մանուկների դատարարանքն աւելի քան զգործը ամբողջութեամբ չըստճաշեալ հասարակական — պետական գործի, եթէ դրան խանգարում կ'են սեփականատէրերը, բուրժուական դատակարարը, կոմմունիստական պետութեան մէջ, ընդհանրապէս, երեխաների հասարակական դատարարակութիւնը հանգիստանում է նոր օրէնքների և սովորութիւնների հիմքը: Ոչ թէ նեղ, փոքր և բնականական կոնկրետով լի ու ազգայնականների բարեկեցութեան մասին միայն մտածող սովորութիւններով ընտանիքն է, որ կարող է դատարարակել մարդուն, այլ միայն դատարարակիչ հիմնարկութիւնները — մանկական հրապարակները, մանկապարտէզները, մանկական տները, ուր երեխան անցկացնելու է օրուայ ժամերի մեծ մասը և արտեղ խելացի դաստիարակները նրանցից կ'ապարաստեն գիտակից կոմմունիստներ, որոնք կ'անուշեն միայն մի օրրազա-

նշանաբան — համերաշխութիւն, բնկերակցութիւն, իրիադարձ օգնութիւն և կոլլեկտիւ:

Բայց ի՞նչ է մեզնի ընտանիքում երեխաների վերաբերմամբ, ի՞նչ են լինելու մտոյների պարտականութիւնները, եթէ ուսուցումն ու դաստիարակութիւնը և նիւթական հոգսերի մեծ մասը ուղիւս մտոյների հոգսի առարկան չեն լինելու: Մի՞թէ երեխային խնամելը, երբ նա ծծկեք է, երբ նա տատանելով ու մօր փեշերից քաշելով է շրջում: Սակայն ալտեղ ևս կոմմունիստական պետութիւնը օգնութեան է հասնում բանւորութիւն — մօքր: Զուգաբար է լինեն առանձին, երեխաները ձեռքերին փողոց շարուած ողջկերք — մայրեր և թոշնած կանայք: Ոչխատաւորական պետութիւնը իրան նուազապէս է գնում ապահովել ամեն մի պատկած կամ անպատկ մօր, քանի դեռ նա կերակրում է մանկանը, ամեն տեղ գիւղերում և քաղաքներում մայրական տներ շինել, ամեն մի հիմնարկութեան մէջ մօցնել մանկական սպաստարան, օրօրոցներ, որպէսզի հնարաւորութիւն տրւի կանանց շաղկապելու մայրական պարտականութիւնները պետական օգտակար աշխատանքի հետ:

Թող բանւորութիւն — մայրերը չվախենան հոմունիստական հասարակութիւնը չ'ապարաստուած մտոյների ձեռքից խլել նրանց երեխաներին, կամ զրկել մանուկներին մօր կաթից, բանութեամբ քալ-

քայել ընտանիքը: Ոչ մի դէպքում: Կոմմունիստական հասարակութիւնը իրան բոլորովին այլ նպատակ է գնում: Նա տեսնում է, որ հին, նախկին ընտանիքը կործանւում է, որ նրանից բաժանւում են բոլոր այն աշխատանքները և քայքայւում բոլոր այն հիմունքները, որոնցով պահւում էր նա: Մեռնում է տնտեսութիւնը. պրոլետար—ծնողները չեն կարող հագալ երեխաների մասին, նրանք անօթ են դաստիարակել ու կերակրել նրանց: Իրերի ալդպի—ոք դրութիւնից վնասւում են թէ ծնողները, թէ երեխաները: Այդ պատճառով կոմմունիստական հասարակութիւնը շտապում է ընդառաջ գնալ բանւորների ու բանւորուհիների պահանջներին և ասում է նրանց: Դուք, երեխասարգներ, զիրեցե՛ք միմիանց: Ամեն մարդ բաղդաւոր լինելու իրաւունք ունի: Թող կեանքը ձեզ չօտրսափեցնի: Մի՛ խուսափէք երջանկութիւնից, մի՛ վախենաք ամուսնութիւնից այնպէս, ինչպէս առաջ, կապիտալիզմի ժամանակ, երբ բանւորուհիներն ու բանւորները վախենում էին, տեսնելով, որ ամուսնութիւնը իրանց համար մի շղթայ է: Մի՛ վախենաք և այն բանից, որ դուք առողջ և երիտասարդ լինելով, կառք աշխատաւոր հասարակութեանը նոր քաղաքացիներ—երեխաներ: Աշխատաւորական հասարակութիւնը կարօտ է աշխատաւոր օյժերի և նա շնորհաւորում է ամեն մի մանկան լոյս աշխարհի գալը: Մի՛ սարսափէք ման-

կան բաղդի համար.—նրան չի սպասում ո՛չ լքում, ո՛չ ցուրտ, ո՛չ էլ քաղց, այնպէս, ինչպէս կապիտալիզմի ժամանակ էր: Կոմմունիստական հասարակութեան մէջ ամեն մի երեխայ հաշի է առնւում, պետութիւնը ապահովում է նրան և նրա մօր պարէնն ու ապահովութիւնը: Հասարակութիւնը կերակրում է մանկան, առանց խելու նրան ա՛յն ծնողներից, որոնք ցանկանում են մասնակից լինել երեխայի դաստիարակութեանը: Հասարակութիւնն իր վրայ վերցնում է երեխայից դաստիարակելու ամբողջ նիւթական բեռը, իսկ հայրական ու մայրական ուրախութիւնը մնում է նրանց, ովքեր ընդունակ են զգալ ու հասկանալ այդ ուրախութիւնը: Սա արդեօք ընտանիքի բռնի քայքայում է: Սա՞ է արդեօք բռնի կերպով երեխան մօրից խլելը:

Թագցնելու կարիք չկալ. հին ընտանիքը մեռնում է: Սակայն ոչ թէ այն պատճառով, որ սոցիալիստական պետութիւնը բռնի կերպով կործանում է նրան, այլ այն պատճառով, որ կեանքի նոր պայմանները վերացնում են նրան:

Ընտանիքը դադարում է ալլեա անհրաժեշտ լինել: Նա պետութեան համար անպէտք է, որովհետեւ անալին տնտեսութիւնը պետութեան ձեռքնառ չէ արդէն: Առանց որեւէ օգուտի նա հեռացնում է աշխատաւորներին աւելի օգտակար ար-

ապրիլական աշխատանքից: Նա պէտք չէ նաև
ընտանիքի անդամներին, որովհետև ընտանիքի
միջև նպասակը — երեխայոց դաստիարակութիւնը
աստիճանաբար հասարակութիւնը վերցնում է իր
վրայ: Անցնալ ընտանիքի տեղ, աղսմարդու և կնոջ
միջև, զարգանում է յարաբերութեան նոր ձև:
Ընկերական և օրտագին միութիւն եր-
կու ազատ է ինքնուրոյն վաստակողներին
և կոմսուներխտական հասարակութեան
հաւասար իրաւունքներին տէր անդամնե-
րին միջև: Սլլևս չկայ կանանց անային («սարկու-
թիւնը»): Ընտանիքում չկայ անհաւասարութիւն:
Զգայ և աշխատանքային, որ եթէ կինը հեռանալ
իր ամուսնուց, կմնալ առանց աշակցութեան և օգ-
նութեան, երեխան ձեռքի: Գոմմուներխտական պե-
տութեան մէջ կինը կախում ունի ոչ թէ ամուս-
նուց, այլ իր աշխատանքային ոյժերից: Ոչ թէ
ամուսինը, այլ իր սեփական աշխատանքն է կերա-
կրում նրան: Երեխաների բնակիւն էլ սպասարկը
չկայ: Աշխատաւորական պետութիւնը նրանց հո-
գատարութիւնը վերցնում է իր վրայ: Նրութեան
— փոքրիկ բոլոր հաշիւները, որոնք աշխատի փա-
ցնում և թուանաւորում են ընտանիքի կանցը,
չքանում են ամուսնութեան միջից: Ամուսնութիւնը
փոխարինում է մէկ մէկու սիրող և հաւատացող
հոգիներին աշխատանքի միութեամբ, որը խոստանում

է տեղի լիակատար օրութիւն և աւելի մեծ
բուականութիւն ամեն ի զխակից ու կեանքի
մէջ խորհող բանւորի և բանւորուհու համար:
Անցեալի ընտանիքի շղթայի ահղ կոմսու-
ներխտական հասարակութիւնը բանւոր-
ներին և բանւորուհիներին խոստանում
է աղսմարդու և կնոջ ազատ և ընկերական
ողով ամուր միութիւն: Իսկ աշխատանքի պայ-
մանները փոխելով, բանւորուհու ապահովութեան
զարգացումով ու անցեալի ամուսնութեան անյու-
ժելի, սխիւքն եկէղեցական կեղծաւոր, հաստատուն
բայց լսկապէս փտած ամուսնութիւնը փոխելով
ընկերական ազատ միութեան, կըքանալ միւս զգեղի,
մութ և մարդկութիւնն ստորացնող և քաղցած
բանւորուհիներին մարակող երեւթք — պրաստի-
տուցիան:

Պրաստիտուցիան առաջ է եկել ապրանքային
անտեսութեան շղթայի ու օգնականատիրութեան գոյու-
թիւնից: Վերայ ելով թէ մէկը և թէ միւսը, ոչլեռ
պատճառ չի լինի օրպէսզի կինը ծախէ իր մար-
մինը:

Թող բանւոր դասակարգի կանալը չախրեն,
որ ընտանիքին վիճակւած է խորտակել: Նրանք
ընդհակառակը թող հրեւանքով զմուսւորեն նոր
հասարակութեան արշալոյսին, ուր ամեն մի կնոջ
մայրական խաչը, որը ամուսն էր նա, թելեւացած

կլինի, ուր վերջ կլինի և կնոջ զլխին կախւած ամենադաժան երևոյթին—պրոստիտուցիային:

Բանւորուհին պրոլետարիատի ազատագրման մեծ գործի հասարակական մարտիկը դառնալով, պէտք է սովորի ու հասկանալ, որ դոյութիւն չպէտք է ունենայ նախկին բաժանումը, թի—սրանք իմ երեխաներն են և նրանց համար են իմ ամբողջ մայրական հոգատարութիւնը, իմ մայրական սէրը, իսկ այդ երեխայը,—քոնն են, դրացուհուներ, ես նրանց հետ դորժ չունիմ: Թող նրանք իմ երեխաներից աւելի քաղցած լինեն, թող նրանց համար աւելի ցոլբոս լինի, քան իմ երեխաներին: Ես չեմ կարող մտածել ուրիշի երեխայոց մասին: Այժմ դիտակից բանւորուհին—մայրը պէտք է այնչափ հասունանայ, որ տարբերութիւն չգտնի իմի և քոնի մէջ, այլ լիշէ, որ կան միայն մեր մանուկները, Կոմմունիստական աշխատաւորական Ռուսաստանի մանուկները:

Նոր աշխատաւորական պետութիւնը կարիք ունի երկու սեռերի յարաբերութեան նոր ձևի: Մօր՝ դէպի իր երեխան ունեցած նեղ սիրոյ տեղ պէտք է դարդանայ մայրական սէրը դէպի մեծ աշխատաւոր ընտանիքի բոլոր երեխաները: Անյու—մելի ստրկացնող ամուսնութեան տեղ ստեղծուած է ազատ ընկերական միութիւն, աշխատաւորական հասարակութեան հաւատար իրաւասէր երկու սիրոյ

անդամների միջև: Էգոիստական փակ ընտանեկան բնիւնի տեղ զարգանում է մեծ համաշխարհային աշխատաւոր մի ընտանիք, ուր բոլոր աշխատաւոր մարդիկ և կանայք ամենից առաջ դառնում են եղբայրներ ու ընկերներ: Ահա թէ ինչպիսի ձև պէտք է ընդունի Կոմմունիստական հասարակութեան տղամարդոց և կանանց յարաբերութիւնը: Սակայն, հէնց այդ ձևը երաշխաւորում է մարդկութեան այն ուրախալի և ազատ սիրոյ ծաղկումը, որը հովանաւորում է խիական հաւասարութեան և ընկերութեան զգացումով և որպիսին չգիտէր կապիտալի ժամանակի չարչիական նիւթապաշտական հասարակութիւնը:

Ճանապարհ տուէք ծաղկող երեխաներին, ճանապարհ տուէք ամուր, կենսութախ երիտասարդ սերնդին, որը ազատ է հոգեկան և սրտազին անչինջ ապրումներով: Այդպէս է Կոմմունիստական հասարակութեան նշանաբանը, որ սրբում, տանում է բուրժւական—կապիտալիստական ընտանիքի ստրկական ձևը: Իսկ հին ընտանիքը թող մեռնի: Եւ լոնուն անկեղծ հաւասարութեան, ազատութեան և ընկերական սիրոյ նոր ամուսնութեան մէջ բանւորուհիները և բանւորները, գիւղացիներն ու գեղջիկներները թող լլուեն ոգեւորութեամբ և հաւատով—կառուցանելու նոր հասարակութիւն աւելի կատարելագործւած, աւելի ազարագատ և

աւելի լուսաւոր համաշխարհային հիմքերով Սո-
ցիալական լեզուաբանութեան կարմիր դրօշակը, որ
Ռուսաստանից լեապ ծածանւելու է երկրագնդի
ալլ երկրների վրայ ասում է մեզ, որ հեռու չէ
այն երկնային ուրբայաւթիւնը, որի մասին մարդ-
կութիւնը երազել է դարերով:

1-50

14 B

504

ՀՀ Ազգային գրադարան



NL0633457

ՀՀ Ազգային գրադարան



NL0633456

ՀՀ Ազգային գրադարան



NL0633455

ՀՀ Ազգային գրադարան



NL0776534

ՀՀ Ազգային գրադարան



NL0633454

ՀՀ Ազգային գրադարան



NL0633458

ՀՀ Ազգային գրադարան



NL0215621

40.782

40.788